




ԶԳՈՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐԱՐԵԱԼ Ի ՆԵՐՍԻՍԷ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ

Արծաթի դարի (ԺԱ—ԺԲ) հայկական մշակույթի ամենեն լավ զարգացող նյութերն մեկն է սուրբ Գրիգորի մեկնաբանությունը՝ թարգմանաբար թե ինքնագիր:

Գրիգոր Բ Վկայասեր (1066—1105) և Գրիգոր Գ Պահլավունի (1113—1166) կաթողիկոսները մասնավորապես հոգածու կրթինն ադոր:

Նոր Կտակարանն ամբողջ՝ Ավետարանները, Գործք առաքելոցը, Առաքելական և Կաթողիկեայց կամ Ընդհանրական թուղթերը և Հովհաննոս Հայտնությունը առաջին անգամ լինելով, լրիվ չափով, հայերեն մեկնություններ կուցեման, ոմանք երկու, ոմանք երեք խմբագրությամբ՝ տարբեր հեղինակներն:

Մեկնաբանական գրականության շարժումին հիմնադիրը պետք է ընդունիլ Գրիգոր Բ Վկայասերը, որ թարգմանիչի համբավ ալ ունի, և իր բազում ճամբորդությունները, սուրբերու վարքին ուսումնասիրության կարգին, կօգտագործե ման ալս նպատակին համար: Ինքն է, որ 1076—1077-ին Կ. Պոլսո մեջ Կիրակոս անունով հայագետ հույն հռետորին նախ վճարովի թարգմանել կու տա «Գործք առաքելոց»-ին Ոսկեբերանի մեկնությունը և ապա զայն սրբագրել կու տա Գեորգ Լոռեցի վարդապետին «Վերքստին արծարծել զխորթացեալ բանս հռետո-

րին, յեղանակելով ի դիրալուրս եւ յարմարականս մերոյինս ազգի»¹:

Նույնպես իր նախաձեռնությամբ է, որ գլուխ կհանվի Ոսկեբերանի՝ Հովհաննոս Ավետարանին մեկնության թարգմանությունը՝ նախ Անդրեաս անուն հայագետ ասորի երեցին և ապա Ծովհազ գալատի Առոն իշխանի հույն քարտուղար Քեոփիստե հռետորին միջոցով, որուն հայերենը կսրբագրե Կիրակոս վարդապետը²:


Կեսարիո Անդրեաս եպիսկոպոսին մեկնություն Հայտնության գիրքին թարգմանությունը կկատարվի Հոռմկլայի Հայրապետանոցի պաշտոնյա Կոստանդ միտրոպոլիտի ձեռքովը, և կսրբագրվի Ներսես Լամբրոնացին, որ կանխավ Բասիլ անուն հույն մեկնակյացե մը ապահոված էր անոր բնագիրը և թարգմանության հիշատակարանին մեջ կգրե. «Սրբագրեցաւ քերթողական արուեստի... ձեռամբ նուաստ եպիսկոպոսին մայրաքաղաքիս Տարսոնի տառապելոյս ներսիս»:

Բացի հույն կամ ասորի լեզուներէ հայացված մեկնություններէ, նկատելի է, որ բուն Հայաստանի կամ հյուսիս-արևելքի մեջ ծաղկող վարդապետանոցներէն Դիոսկորոսի աշակերտներէն Անանիա Սանահնեցին

¹ Եղիշե արքեպ. Գորյան, Պատմ. հայ մատենագրության, Երուսաղեմ, 1933, էջ 62:

² Անդ, էջ 62—63:

կգրե մեկնություն Պողոսի թուղթերուն, ըստ ոմանց նաև մեկնություն Մատթեոսի Ավետարանին³։ Սարկավագ վարդապետի աշակերտներն Սարգիս Կունդը 1146-ին քաղվածաբար կատարատե մեկնություն Դուկասու Ավետարանին։ Գրիգոր Գանձակեցի, Թոքակերի որդի կոչված, կգրե Ընթերցվածոց մեկնություն մը⁴։



Գործք առաքելոցի մեկնություններուն։ Ասոնց ուղիով կընթանան հետագա դարերու իրենց արժանալիոր հաջորդները, որոնց գործերուն մեծամասնությունը՝ «Մեկնություն, Լուծմունք Սուրբ եւ ծիսական գրքեանց», դեռ ձեռագիր, կկարդուին ուսումնասիրության և հրատարակության⁵։

Մյուս կողմէ Կիլիկիո Սև լեռան վանքերուն մեջ, Գրիգոր Գ Պահլավունիի մասնավոր հոգածությամբ, գիտնական Ստեփանոս Կարմիրվանցիի աշակերտներն երեք դասընկերներ, երեքն ալ շնորհալի տիտղոսով պատվված, Իգնատիոս Եպիսկոպոսը, կատարատե մեկնություն Դուկասու Ավետարանին, Սարգիս վարդապետը և Կլայեցի Ներսես առանձին-առանձին կգրեն իրենց հատուկ մեկնությունները Կաթողիկե թուղթերուն։

Ասոնց կարգին որոշ տեղ և կշիռ ունի Ներսես Ծնորհալիի **Մեկնություն Սուրբ Ավետարանին որ ըստ Մատթեոսի**, մեկը իր գրչի մնայուն արժեքներն, որ կբաղկանա երկու գլխավոր մասերե⁶։

Ա. «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ՏԱՍՆ ԽՈՐԱՆԱՅՆ»։

Բ. «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆԻՈՐ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ»։

Ասոնց վրայ գաղափար մը կազմելու համար պետք ենք զանոնք ներկայացնել առանձին-առանձին։

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ՏԱՍՆ ԽՈՐԱՆԱՅՆ»

Սկզբնական տասն խորաններուն նկարագրությունը կգտնվի Ելից ԻԶ գլուխին մեջ։ Ուրեմն նախ ուշադրությամբ կարդալու է զայն և ապա Ծնորհալիին մեկնությունը, լավ ըմբռնելու համար տասն խորաններու մասին տրված բացատրությունները։

Այս մեկնությունը շատ հետաքրքրական, բազմազան ծանոթություններով և նրբություններով լեցուն արվեստագիտական ընդարձակ տեսություն մըն է, ուսուցողական ընտիր ձեռնարկ մը՝ խորաններու պատկերներով։

⁵ Հատկապես Ա., Աստվածաշնչի գրքերի տպագիր մեկնություններ մեր եկեղեցական մատենագրության մեջ։ «Էջմիածին», ԺԱ.—ԺԲ, 1966, էջ 204։

⁶ Այս գործը լույս տեսած է մեծակ երկայուն հատորով մը 1825-ին, Կ. Պոլիս, սա անունով. «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԻԵՏԱՐԱՆԻՈՐ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ»։ Արարեալ ի սրբոյն Ներսիսէ շնորհալոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն. եւ անտի աւարտեալ չեքանելոյն Յովհաննու Երզնկացոյ՝ որ եւ կոչի ծործորեցի։ Տպագրությունը՝ ըստ ընտիր օրինակաց՝ հրամանովը Պալատցի Կարապետ պատրիարքին, արդյամբ տպարանատեր Ալենցի Աբրահամ ամիրային։

Այստեղ պետք է հիշել Աստվածաշունչը մեկնաբանող ուրիշ վարդապետներ ալ, ինչպես Մխիթար Գոշը՝ հեղինակ Երեմիա մարգարեի և Սաղմոսի, Վանականը՝ Հոբի, Վարդան Արևելցի պատմիչը՝ Դանիելի, Հնգամատյանի, Երգ Երգոցի, Վարդանը՝ չորս Ավետարաններու, Բարսեղ Շոնը՝ Մարկոսի, Գեորգ Ակնոացին՝ Եսայիի և

³ Հ. Ղ. Մ. Ալիշան, Ծնորհալի եւ պարագայք իր, Վենետիկ, 1878, էջ 182—183։

⁴ Ալիշան կծանոթագրե. «Էսկ Գրիգոր որ սովորաբար Գանձակեցի կանվանի՝ ծանոթ է Ընթերցումնոց Մեկնութեան գրովք, թեպետ և այսպիսի մեկնության գիրք գտվին զանազան ոճով, զանազան հեղինակաց գործ, և չէ հայտ որն է իրեն հատուկ գործն»։ Անդ, էջ 182։

րագրության, այլ խոսքով՝ մանրանկարչության, որ Ավետարանին անմիջական գործածությունը դուրացնել է զատ կնկատուն միջնադարյան հայկական կերպարվեստի զարգացումին⁷:

Հրատարակիչը «Մեկնություն տասն խորաններուն համար»-ը կորակե հառաքալություն կամ մուտք Շնորհալիի կատարած Ավետարանին մեկնության...

Բայց «Տասն խորաններուն մեկնությունը» գրքույկի մը ծավալն ունի: Ան կբաղկանու երեք բաժանումներ:

Ասոնցմե առաջինը, որ գլխավորն է, հատկացված է խղճմտությանը ներկայացնելու և բացատրելու ձեռագիր, հաճախ նաև տպագիր Ավետարաններուն նակատները կամ առաջին երեսներուն վրա, տեսնվող համաբարբառ ցուցակներուն խորանաձև հորինվածքը, անոնց ծագումը, թիվը, բույսերու և թռչուններուն նկարները, զարդերն ու գույները, իրենց խորհրդանշական իմաստներով միասին, ուստի կրնա ծառայել իբր ուղեցույց-առաջնորդ նաև Ավետարաններու խորաններուն պատկերագրության, որ այնքան կզարգանա. միջին դարուն շնորհիվ հայկական մանրանկարչության արվեստին ծաղկումին:

Եթե Հին Ուխտի խորաններուն ծագումը կվերանա մինչև Մովսես մարգարեն, ապա Նոր Կտակարանի մեջ զետեղվող Ավետարանի համաբարբառ ցուցակներուն սկզբնավորումը կհասնի մինչև Եվսեբիոս, որ գոհացում տալու համար Կարպիանոս Եգիպտացիին խնդրանքին Եվսեբիոս կողմն Առաքելական և Կաթողիկե թուղթերուն համար կատարված աշխատության գիծովը կպատրաստե Ավետարանի բովանդակության համաբարբառ ցուցակներ՝ տասն խորաններով, ուր բաղդատության համար դեմ առ դեմ գլխակարգությանը և համարներով կընշանակվին այն բոլոր հատվածները, որոնք չորս ավետարանիչներուն մոտ իրարու կը համապատասխանին, կամ իրարմե կտարբերին ինչ-ինչ մանրամասնությամբ, կամ պակասով և կամ հատուկ են մեկին կամ մյուսին և կամ հասարակաց են երկուքին և կամ երեքին ալ:

Խորաններուն պատրաստության սկզբնական նպատակն է եղած օգնել ուղղափառներուն, որպեսզի սուրբ Ավետարանին փաստերովը կարենան պայքարիլ հերձվածողներու և հերետիկոսներու դեմ:

Ս. Ներսես սուրբգրական լայն մեջբերումներով կջանա հաստատել Ավետարանի խորաններուն ալ տալը հատ լինելը՝ շեշտե-



Ոսկանյան Աստվածաշունչ, Ամստերդամ, 1686, չորս ավետարանիչներ

լով անոնց ամեն մեկուն հանգամանքն ու նկարագիրը և նպատակը:

Առաջին խորանին մեջ կբնակի աստվածությունն «ի լոյսն անմատոյց»:

Բ և Գ խորանները բնակարան են անմարմին հրեշտակներու քահանայության: Դ-ը կպատկերացնե եղեմական դրախտը: Ե-ը՝ Նոյան տապանը: Զ-ը՝ Աբրահամի խորանվրանը: Է-ը և Ը-ը՝ Սրբություն Սրբոցը: Թ-ը՝ Սողոմոնի խորանը: Ժ-ը՝ «Ամենակատար եւ լի ճշարտութեամբ սուրբ եւ կաթողիկէ եկեղեցին», որ կբովանդակե բոլոր խորհուրդները:

Ըստ այսմ ալ զգուշությամբ և իմաստներու բացատրությամբ կընշանակվին յորաքանչյուր խորանին հատուկ հորինվածքը, գույները, պատկերները և այլ մանրամասնություններ ըստ կարգի:

«Մեկնություն տասն խորաններու համար»-ի վերջին մասին մեջ Շնորհալի շատ ակնածալից և սիրագեղ դիմաւորությամբ կըխոսի իր երեց եղբորը՝ Գրիգոր Պահլավունիին, գոր կպատվե իբր «Գլուխ պատուական յետ գլխոյն եկեղեցւոյ, Գրիգորիոս կաթողիկոս հայոց»:

⁷ Վ. Հ. Ղազարյան, Կերպարվեստն ըստ Ներսես Շնորհալու, «Լրաբեր», 1, Երևան, 1972, էջ 68:

⁸ Ներսես Շնորհալի, Մեկն. Ս. Աւետ., ըստ Մատթ.-ի, էջ 16:

Կարդանք այդ հատվածը՝ տեսնելու համար համետությունը հեղինակին և համոտելու համար գեղեցկությունն իր հորդահոս լեզվին:

«Միտյո գորություն՝ գերազանց է քան ըզբնություն... եւ եթէ առ ոմանս՝ իցէ պանծալի ըստ մարմնաւոր իրիք պատճառաց, որպիսի իցէ բոլորին կրողաց, ըստ իմում պատահեալ անձին՝ առ ի քէն գոթութեանց, ոչ յաղագս բնատրականին միայն կապակցութեան արեան, որ հանուրց է առիթ եւ փոքրոգեաց, այլ սակս գերազանցելոյ բանի եւ գրոյ՝ ներգործեցելոյ առ իս բարեաց... Ձեռնարկեալ յայս առաջարկություն՝ ըստ պատուասիրաբար քում հրամանի, գլուխ պատուական, յետ գլխոյն եկեղեցւոյ, Գրիգորիոս Կաթողիկոս Հայոց»⁹:

Երկրորդ բաժինն ունի «Եկեղեցական պատմություն» վերնագիրը:

Հեղինակը, խոսելով Ավետարանի գրավոր ծագումեն, կհիշէ, որ սկզբնաբար Ավետարանը կուտուցվէր բերանացի, որպէսզի ունկնդիրները անոր վարդապետությունը գրեն իրենց սիրտերուն վրայ «հոգիով և ոչ թէ մտրով»։ Բայց քանի որ բերանացի ուտուցումը ժամանակի ընթացքին կենթարկվի փոփոխության, մոռացումի և ամլության, ապա ուրեմն չորս ավետարանիչները գիրի կառնեն Տեր Հիսուս Բրիստոսի կյանքն ու վարդապետությունը:

Ըստ իր տվյալներուն Տիրոջ համբարձումեն յոթը տարի հետո Մատթեոս կգրէ Ավետարանը հրեաներուն համար: Տասնևհինգ տարի հետո Մարկոսը, Պետրոսի հետևողությամբ՝ աղեքսանդրացիներուն համար: Բասաներկու տարի հետո Լուկասը՝ Պողոսի վարդապետության համաձայն՝ Հռոմայեցիներուն: Յոթանասուն տարի ետքը՝ Հովհաննէսը կգրէ ասիացիներուն համար:

Ասոր կցվի բացատրությունը չորս ավետարանիչներուն կենդանակերպ պատկերներուն՝ ըստ Եզեկիելի տեսիլքին (Ա գլ.) մարդ, առյուծ, եզն և արծիվ:

Մարդը՝ Աշանակ Մատթեոսի, որ Աստուծո բանին անսկզբնական ծնունդէն սկսյալ Մեսիան կներկայացնէ իբր որդի Դավթի և որդի Աբրահամի:

Առյուծը հօգը՝ Աշանակ Մարկոսի, իբր օրինակ չարին դէմ արիանալու:

Եզը գլխարկ՝ Աշանակ Լուկասի, որ Հիսուսի խաչելություն կմտնեցնէ պարարակ եզան գենումին:

Արծիվը՝ Աշանակ Հովհաննէսի, որ մինչև երկինքի բարձունքները կորոտա «Որդիին անսկզբնական ծնունդը Հորմեն»:

Ծնորհալի իբր քարոզիչ կու տա նաև Ավետարան անունին բացատրությունը, զոր մէջ կբերենք թարգմանաբար:

«Գործերուն նմանությամբ առաւ նաև անունը, վասնզի աշխարհին կալեալ թէ Աստված (կիջնէ) երկիրը և մարդիկ (կելլեն) երկինքը: Հրեշտակները կբնակին մարդերու հետ և մարդիկ հաղորդ կլինին հրեշտակներուն՝ երկայն պատերազմը կբակվի, թշնամին կամչնա, և ճշմարտությունը կու գա կհասնի: Աստվածապաշտության ճատերը խոսքով և արյունով կսերմանվին ընդհանուրին մէջ: Այս բոլորին համար ալ (Բրիստոսի) պատմությունը կկոչվի Ավետարան»¹⁰:

Բ

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ա. ԱԻԵՏԱՐԱՆԻՆ»

Ներսէս Ծնորհալի Մատթեոսի Ավետարանին մեկնությունը վերը հիշված հառաջաբանության պէս ընդարձակ բռնված է, բայց դժբախտաբար կիսատ թողված է:

Ան մուտքին հետ միասին կբռնէ ոյթումներէք տպագրական երկայուն երես՝ սովորականէն ավելի մեծ ծավալով:

Բուն մեկնությունը Մատթեոսի ԻԸ գլուխներէն կընդգրկէ միայն առաջինէն մինչև Ե գլուխ 17 համարը:

Մնացած պակասը Արիստակես վարդապետի մը իր Եփրեմ աշակերտին հետ կատարած անհաջող աշխատանքն էտքը¹¹, 1316-ին, կամբողջացնէ Հովհաննէս Երզնկացի, 1326, Պլուզ կոչված բանաստեղծ գիտուն վարդապետը, «բայց ոչ այնքան ընդարձակությամբ և ոչ ալ մասնավոր խմամբ տաճելով դասական լեզվի պահանջներուն, ինչպէս ըրած էր Ծնորհալին»¹²:

Արդեմ հիշեցինք, թէ Կլայեցին Ավետարանին մեկնությունը կգրէ Գրիգորիս Պահլավունիին հանձնարարությամբ:

Գործին բովանդակության խորքը, ոճը և լեզվին հորդահոս սահանքը, ինչպէս նաև Լամբրոնացիին և Ծործորեցիին ակնարկությունները¹³ և մեկնության կիսատ թողվիլը ապացույց են անոր հասուն տարիքի մէջ գրված լինելուն:

ԾՆՈՐՀԱԼԻՆ ԻՐ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներսէս Ծնորհալի իր աշխատության համար ունի երկու նպատակ:

1. «Որպէսզի ամենքով միասին փառավորվի փառքի անկարոտ Աստված»:

¹⁰ Ամր, էջ 20:

¹¹ Ալիշան, անդ, էջ 118—119:

¹² Դուրեան Ե., անդ, էջ 240:

¹³ Ալիշան, անդ, էջ 118:

⁹ Ծնորհալի, անդ, էջ 16:

2. Որպեսզի «Ավետարանի խոսքերը դուրսնկալ լինին զանոնք սորվող ուսումնասեր մանուկներուն»¹⁴, իմա՝ եկեղեցվո զավակներուն:

Ելնելով այս մեկնակետեն, Ծնորհալի հավակնությունը չունի իր սեփական հեղինակությամբ միայն հրապարակ ելնելու, ուստի մեծ գգուշությամբ կամփոփե Ավետարանին յուրաքանչյուր խոսքի մասին սուրբ հայրերու ընդարձակածովալ Ակարագրությունները՝ առանց անոնց անուններուն և աղբյուրներուն հիշատակության, որ ընդունված սովորություն մըն էր ժամանակին: Ան ուզած է՝

«Հավաքել սուրբերու տարածված խոսքերը և զանոնք դնել Ավետարանի յուրաքանչյուր խոսքին դիմաց... տեղ կա որ՝ մեկնիչներուն խոսքերուն նկարագրությունը դրինք նույնությամբ, կա որ անոնց միտքերը տված ենք մեր խոսքերովը՝ երբոր անոնք ընդարձակորեն կհատարանեն, կա որ անոնց այլևայլ տեղեր ցրված խոսքերը միասին բերած ենք ավելի ընտիր շարակարգությամբ՝ փոքր բան մըն ալ մեզմե ավելցնելով՝ անոնց խոսքերուն անխնամ լինելու պարագային, կա որ գտած ենք զանազան գիրքերու մեջ, և կա ալ որ մեր իսկ ներածություններեն՝ որպեսզի ամենքովը միասին փառավորվի փառքի անկարող Աստվածը»¹⁵:

ԾՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ՈՍԿԵՐԵՐԱՆԸ

Ներսես Ծնորհալին սուրբ հայրերեն ամեն շատը կհետևի Հովհան Ոսկեբերանին:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ ԳԼ. Ա, ԲԱՆ 1

ԾՆՈՐՀԱԼԻ

ՈՍԿԵՐԵՐԱՆ

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ դաւթի որդւոյ Աբրահամու:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Զինչ խօսի անտարանիչս, զմիածնէ որդւոյ Աստուծոյ հանդերձեալ է ճառել, եւ զդաւիթ ի մէջ բերէ. զայր մի՝ որ յետ բազում ժամանակաց եղեւ: Այլ դու հանդարտ լեր, եւ մի զամենայն այժմ խնդրեր: Քանզի ոչ գառաջին ծննդեմէն որ անպատմելին է, պատմէ մեզ. զի զայնմանէ Եսայի ասէ. թէ ազգաստոհմ նորա ո՞ր պատմեսցէ. այլ զայս որ յերկրի աստ եղեւ. նաեւ ոչ զայս հնար է բովանդակ ճառել, զի անկարելի է բանի: Նա՛ եւ այսքան եւ եթ ցուցանել, եթ ճշմարտի որդին Աստուծոյ յանձն էաւ լինել որդի մարդոյ, զի զհողելէնդ արասցէ որդի Աստուծոյ: Եւ յորժամ լսիցես՝ թէ Աստուծոյ որ-

Այդպես կընեն նաև Սարգիս Ծնորհալիի Կաթողիկէ թուղթերու մեկնության պարագային և ուրիշները: Կլայցեցին ալ կառնե Ավետարանին յուրաքանչյուր գլուխը և ապա ամեն մեկ համարը առանձին, զոր կմեկնե իրեն հատուկ գեղեցիկ, սեղմ և հստակ լեզվով մը, շատ անգամ բառացի հետևողությամբ, այն աստիճան, որ չենք կարծեր պատած լինել, եթե Ծնորհալիին այս գործն անվանենք **Ավետարանին Ծնորհալիին մեկնությունը ըստ Ոսկեբերանի**: Ասիկա թե՛ մեկնության եղանակին որդեգրության և թե՛ բացատրություններու հետևողության համար:

Շատ անգամ հատվածներ կան, զորս Ծնորհալին շարադրական ավելի ճշգրիտ հպումով մը նույնությամբ փոխ կառնե Ոսկեբերանին: Բայց մինչ Մատթեոսի Ա. գլ. առաջին համարին մեկնության, սուրբ Հովհան Հայրապետը կհատկացնե 34 երես, Ծնորհալին կբավականանա երեք երեսով, ի հարկին Ոսկեբերանին քառ առ քառ մեջբերումներով: Օրինակ՝ կառնենք սա բաղդատական հատվածը, ուր Ծնորհալին հավատարիմ է բնագիրին ճշգրտության և անոր բացատրության կերպին և անմիջապես կըմտնե նյութին, մինչ Ոսկեբերանը 64 տող ներածականն մը ետքը կանցնի նյութին, և չի խոսիր հանուն ավետարանչին, այլ իր՝ և ավելի համարձակությամբ:

«Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու»:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ՝ 64 տող նախաբանն մը ետքը կգրէ:

«Գիրք, ասէ, լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու»: Զի՞նչ խօսիս. զմիածնէ որդւոյն Աստուծոյ խոստացար ճառել, եւ զԴաւիթ յիշես. զայր մի՝ որ յետ բազում ազգաց եղեւ, եւ զնա նմա նախնի՞ կոչես: Եւ դու հանդարտ լեր, եւ մի զամենայն միանգամայն խնդրեր ուսանել, այլ մեղմով՝ եւ սակաւ սակաւ. զի այժմ դեռ առաջի դրանց կաս մօտ յանդաստակս արտաքինս՝ զի՞ այդչափ փութաս յանձնուսն մտանել. չեւ եւս զարտաքինս զամենայն քաջ ճշմարեցեր: Քանզի ոչ եթ զայնմ ծըննդեմէն պատմեսք մեզ. նա եւ ոչ զմիւսէն՝ որ յետոյն եղեւ. քանզի անճառ եւ առանց հասանելոց է: Եւ նախ քան զիս՝ զայս քեզ Եսայի մարգարէն ասաց... եթէ «Չազգաստոհմն նորա ո՞ր պատմեսցէ: Եւ այժմ ոչինչ

¹⁴ Ծնորհալի, անդ, էջ 16:

¹⁵ Անդ:

դիմ' եղև ըստ մարմնոյ որդի դաթի եւ Ար-
րահամո, մի յերկուանայցես' եթէ դու որդի
ադամայ' ոչ լինիցիս շնորհօք որդի Աստու-
ածոյ. զի ոչ իզոր ինչ եղև գալուստ նորա, եթէ
ոչ' հանդերձեալ էր մեծ ինչ գործել: Ծնաւ
ըստ մարմնոյ՝ զի դու ծնցիս ըստ հոգւոյ:
Ծնաւ ի կուսէ՝ զի դու ծնցիս յաւազանէ:
Վասն այնորիկ եւ ծնունդ նորա է մնան մե-
րումս, եւ է ի վեր քան զմերս. ի կնոջէ
ծնանելն՝ այս մեզ անկէ է. եւ ի կուսէ եւ ա-
ռանց առն' այն բնութեանս ստեղծողին է:
Որպէս ինքն հոգեւորապէս ծնաւ զըստ
մարմնոյ ծնունդ ծնանիմք եւ մեք ըստ հոգ-
ւոյն զվերստին ծնունդն:

(ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Որ ըստ Մատթէոսի

արարեալ ի սրբոյն

Ներսիսի շնորհալոյ: Կ. Պոլիս, 1825: Էջ
23—24):

գառաջին ծննդեանն պատմիցեսք, այլ զայ-
մանէ որ աստ ի խոնարհս յերկրիս եղև
բազում վկայիք: ...քանզի եւ զայս չէ ինչ
հնար՝ թէ ամենեւին բովանդակ կարիցեսք
ճառել. զի ահագին է եւ անքննական: ...զի
եւ որդի է անսկզբնականն Աստուծոյ... առ-
նոյր յանձն անուանիլ եւ որդի Դաւթի, զի
զքեզ արասցէ որդի Աստուծոյ, յանձն առ-
նոյր հայր իւր անուանել զծառայն, զի քեզ
ծառայիդ արասցէ հայր զտէրն: ...եւ արդ
յորժամ լսիցես, թէ որդի Աստուծոյ՝ որդի է
Դաւթայ եւ Արրահամո, մի ինչ այնուհետեւ
յերկուանայցես, եթէ դու որդի Ադամայ ոչ
լինիցիս որդի Աստուծոյ: Զի ոչ եթէ ի զուր
ինչ եւ վայրապար այնչափ զինքն խոնար-
հեցոյց, եթէ ոչ հանդերձեալ էր զմեզ բարձ-
րացուցանել: Ծնաւ ըստ մարմնոյ, զի դու
ծնցիս ըստ հոգւոյն: Ծնաւ ի կնոջէ, զի դու
ծնցիս յաւազանէ՝ որ եղերդ որդի: Վասն
այսորիկ կրկին ծնունդ եղև, եւ մեզ նման,
եւ ի վեր քան զմեզ. զի ի կնոջէ ծնանելն՝ այն
մեզ անգ է. եւ ոչ յարեմէ եւ ոչ ի կամաց
մարմնոյ, այլ ի հոգւոյն սրբոյ, այն նմա՝ որ
ի վեր քան զմեզ ծնունդ էր. եւ ի մեզ հան-
դերձեալ էր կատարել, յառաջագոյն գուշա-
կեր. զի որպէս ինքն առանց արեան եւ ա-
ռանց կամաց մարմնոյ ծնաւ զերկրորդ ծը-
նունդն, նոյնպէս եւ մեք առանց արեան եւ
առանց մարմնոյ ի սուրբ հոգւոյն ծնանիցիմք
զվերստին ծնունդն: Ասեւ մկրտութիւն եւ այլ
ամենայն այսպիսի ինչ՝ էր սորին օրինակ:

(ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՔԵՐԱՆԻ

ՅԱԻԵՏԱՐԱՆԱԳԻՐԻ ՄԱՏԹԷՈՍ

Գիրք Կրկին

Վեներսիկ, Ս. Ղազար, 1826:

ճառ Բ. երեսք 19—21):

Վերի հատվածներուն բաղդատութենէն
կտեսնվի, որ Ծնորհալիին մեկնությունը շատ
տեղ իմաստով և բացատրությամբ միևնույնն
է Ոսկեբերանին հետ՝ միայն իմաստությամբ
խտացված:

Երկուքն ալ մեկնության համար ծանոթա-
գրելու տեղ կատենաբանեն:

Անոնք Մատթէի Ա առաջին համարը ար-
տասանելէն ետքը կհարցնեն:

«Ի՞նչ ըսել կուզէ ավետարանիչը (կամ
մեկնիչը) որ կոչված է ճառելու Աստուծո՝
միածին որդիէն, և ահա կմեջբերէ անունը
Դաւիթի, մարդ մը որ երկար ժամանակ ետ-
քը եղաւ»:

Երկուքն ալ բեմէն կհանդարտեցնեն ուն-
կընդիրները և կպատասխանեն: Աստվածոր-
դին հանձն կառնէ մարդու որդի լինել, որ-
պէսզի հողեղեն մարդը դարձնէ Աստուծո

որդի: Ավետարանն այսպէս, Հիսուսի Քրիս-
տոսի ծննդյան պատմության հետ, կհայտ-
նէ նաև Աստուծո բովանդակ տեսչությունը
կամ նախախնամությունը, Երկվային, Դաւի-
թին և Արրահամին տված խոստումը և ավե-
տիքը, թէ անոնց շատավիղեն պիտի ծնի
Մեսիան, որով պիտի օրհնվին երկրի բոլոր
ազգերը: Այս հիմամբ է, որ Հիսուսի Քրիս-
տոսի ծննդյան ազգահամարին մեջ կհիշվին
Դաւիթն ու Արրահամը և սուրբ կույսի ան-
վան տեղ իր ազգակից խոսեցյալը Հովսե-
փը: Վերջինին պատճառներն են հին օրեն-
քը, որ կթույլատրէր ամուսնությունը միայն
ազգակից եղողներուն միջև, սովորությունը,
որ այրերուն կուտար առաջնությունը, նա-
խազգուշությունը, որպէսզի կուսական ծը-
նունդին հոչակումը իբր պատրվակ չծառա-

լեր հակառակորդներուն անապական կույտը զրպարտությամբ քարկոծելու:

Այս առիթով ներկայիս կկցենք հատված մը թարգմանաբար սուրբ Ներսեսի մեկնությունեն՝ գաղափար մը տալու համար առհասարակ սուրբ հայրերու տրամաբանության, ոմին, հոռետորության, քարոզչական ձիրքին և մանավանդ Աստվածաշունչի ծով հմտության, որոնց ամենուն արծաթե բերանն է մեր Հայրապետը Ներսես Շնորհալի:

ՕՐԻՆԱԿ ՄԸ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ
ՄԵԿՆՈՒԹԵՆԵՆ

«Գիրք ծնունդի՝ Դավիթի որդի, Աբրահամի որդի՝ Հիսուսի Քրիստոսի» (Մտթ. Ա. 1):

Մեկնություն

Ի՞նչ կխոսի ավետարանիչը. նա հանդերձյալ էր ճառել Աստուծո միածին որդիեն, և ահա կմեջբերե Դավիթը. մարդ մը, որ շատ ժամանակ ետքը եղալ:

Հանդարտ եղիր դու, և ամեն բան մի ուզեր հիմա:

Վասնզի առաջին ծնունդեն, որ անպատմելի է, չի պատմեր մեզի, որովհետև անոր մասին Նաային կրես. «Ո՛վ պիտի պատմե անոր ազգատոհմը». այլ այս ծնունդեն, որ հոս երկրի վրա եղալ: Թեև այս ալ անհնար է ամբողջությամբ ճառել, վասնզի խոսքով կարելի չէ: Այլ միայն այսքան ցուցնել, թե ճշմարտապես Աստուծո որդին հանձն առալ լինել մարդու որդի, որպեսզի քեզ հողեղենդ ընեն Աստուծո որդի:

Եվ երբ լսե, թե Աստուծո որդին, ըստ մարմինի, եղալ Դավիթի և Աբրահամի որդի, մի զարմանար, միթե դու՝ Ադամի որդիդ, շնորհքով չես լիներ Աստուծո որդի: Վասնզի իզուր բան մը չեղալ անոր գալուստը, եթե նա կոչված չլիներ մեծ բան մը ընելու: Ծնալ մարմինով, որպեսզի դու ծնիս հոգիով: Ծնալ կույսե, որպեսզի դու ծնիս ավագանեն: Ասոր համար ալ անոր ծնունդը նման է մերինին, և մերինեն ավելի վեր է: Կնոջմե ծնիլը մեզի անկ է. իսկ կույսե և առանց այր մարդու՝ այն բնության ստեղծողինն է: Ինչպես որ ինքը հոգևորապես ծնալ մարմինին ծնունդը, մենք ալ հոգիով կծնինք վերասին ծնունդը:

Եվ որպեսզի ավետարանիչին Հիսուս անուն ըսելովը չմոլորիս, անոր անվանակիցովը քովը կդնե, թե Դավիթի որդի է: Քանի որ Նավեի որդին՝ Հեսու, Հուդայի ցեղեն չէր, որմե էին Դավիթ և Քրիստոս, այլ ուրիշ ցեղե մը:

Եվ ինչո՞ւ կըսե Հիսուսի Քրիստոսի լինելուն գիրքը (ազգաբանությունը), երբ հանդերձյալ է պատմել ամենը:

Ինչպես, օրինակ, Մովսես՝ երկինքի և երկրի ստեղծումի գիրք ըսելով կնշանակե ոչ միայն երկինքն ու երկիրը, այլև այն ամենը, որ անոնց մեջն են, նույնպես ասով ալ կըլայտնեն ոչ միայն Հիսուսի ծնունդը, այլև բովանդակ տեսչությունը:




Ոսկանյան Աստվածաշունչ, Քրիստոսի ծննդաբանության ծառը, ըստ Մատթեոսի Ավետարանի

Եվ ինչո՞ւ նախ կհիշե Դավիթը և ապա Աբրահամը:

Վասնզի մարդը ամենուն բերանն էր՝ ժամանակին մոտավորությամբ: Որովհետև թեպետև Աստուծո, Ավետիքը տրվեցալ երկուքին, Աբրահամին՝ թե «քու զավակովդ պիտի օրհնվին երկրի բոլոր ցեղերը», և Դավիթին՝ թե «քո որովայնի պտուղեն պիտի նշանակենք քո աթոռը». սակայն նա՝ իբրև հինը մոռցված էր, և սա, որպես նոր, հայտնի էր: Ասոր համար ալ դպիրները Հերովդեսին մոտ վկայության ատեն չէին հիշեր Աբրահամը, այլ թե Դավիթի զավակեն, Բեթղեմեմ գյուղեն, ուրկե Դավիթն էր, պիտի գա Քրիստոս: Ասիկա հրեշտակն ալ կավետն կույսին, թե՛ Տեր Աստված անոր պիտի տա իր հոր Դավիթին աթոռը. և մարգարեն ալ, թե՛ «Դավիթի աթոռը պիտի նստի նա»: Եվ զինք Աբրահամի որդի չէին կոչեր, այլ Դա-

վիթի, ինչպես որ կույտերն ալ կաղաղակեին: Եվ երբ Տերը փարիսեցիներուն կհարցնէ, թէ «Քրիստոս որո՞ւն որդին է կըսեք»: Դա՛վիթ ի՞նչ կըսէ: Վասնզի լսած էին մարգարե-վիթի՝ կըսէն: Վասնզի լսած էին «Դավիթ պիտի գա, անրեն, որ կըսեին, թէ «Դավիթ պիտի գա, Դավիթ պիտի հայտնվի»։ ոչ թէ անոր մա-սին, որ վախճանեցալ, ալ անոր զավակն, որ պիտի լինէր աշխարհի փրկիչը:



Խորան, 1251 թ. ձեռագրից, մանրանկարիչ՝ Վարդան

Եվ ուրկե՞ կըսեն, թէ Դավիթեն էր, քանի որ ոչ թէ այրեն, ալ կնոջմե ծնալ և կույսը չի մտներ ազգահամարին մեջ:

Դու՛ն լսե Աստուծո, որ ըսալ Գաբրիելին. «Գնա կույսին, որ նշանված է այն մարդուն, որուն անունն է Հովսէփ՝ Դավիթի ցեղեն և տունեն:

Արդ, եթէ Հովսէփ Դավիթի ցեղեն էր, հայտնի է, թէ կույսը անոր մերձավոր ազգա-կան էր: Վասնզի օրենքը կհրամայէին ուրիշ տեղէ կին չառնել, բայց միայն միևնույն ցե-ղեն:

Եվ թէ ինչո՞ւ կույսը չառնէր ազգահամա-րին մեջ, ալ միայն Հովսէփը:

Ասով բնալ մի երկմտիր. վասնզի անոնց համար օրենք չէր ազգահամարի մեջ թվել կիները, ալ միայն այրերը: Եվ որպէսզի սկզբնական օրենքին սովորությունը չլուծէ,

այդ պատճառով ալ լուռ կմնա կույսին նախ-նիքներուն մասին և կմեջքերէն Հովսէփիննե-րը:

Դարձյալ՝ վասնզի չէր ուզեր շուտով հայտ-նել հրեաներուն, թէ Քրիստոս ծնած է կույ-սն, որպէսզի անոնք, այդ բանին չհավա-տալով, մեղքի բարորաւքներով չքարկո-ծէին կույսը: Անոնք իրենց չարությանն ձե-որմառու ունեին անցած ժամանակը, այն, թէ սկիզբէն ոչ ոք լսած է, որ կինը կծնի ա-ռանց այդ մարդու:

Իսկ թէ Հովսէփին, որ արդար էր և սպա-սավոր խորհուրդին, ինչու պետք եղալ հրեշ-տակին երևումը և մարգարեին վկայություն-ը:

Ադիկա կուսական ծնունդն ընդունելու համար է: Հրեաներն ի՞նչպէս կրնային ա-զատիլ չար կարծիքներէ, քանի որ նոր և չեղած բաներ էին, որոնց երբեք ականջա-լուր եղած էին: Եվ ապա Դավթեն հետո կը-վերանա մինչև օրհնության աղբյուրը՝ Աբ-րահամ: Վասնզի անոնք երկուքն ալ զար-մանալի էին հին ատենները, մեկը իբր մար-գարէ և թագաւոր և մյուսն իբրև հայր նա-հապետներու. և վասնզի ամուլ Սառայէն ե-ղած ծնունդին ավետիսովը պատկերացալ բանին ծնունդը, որ եղալ սուրբ կույսեն. ա-սոր համար կըսէ¹⁶....

ՆՇՄԱՐՆԵՐ

Ներսէս Ծնորհալիին գրած մեկնություն-ներուն վրայէն ութ դարեր սահած են:

Պատմական, տեղագրական, բնագրա-կան, ձեռագրական և հնագիտական պե-ղումներն ու հայտնությունները նորանոր հո-րիզոններ բացած են Աստվածաշունչի հաս-կացողության և մեկնաբանության համար: Բայց ինչպէս կտեսնվի Ծնորհալիի «Մեկնու-թյուն տասն խորաններուն համար»-ին ամ-փոփումեն և Մատթեոսի առաջին գլուխ մեկ համարին մեկնութենէն, հեղինակին մշա-կումները այսօր անգամ հետաքրքրական են և զուրկ չեն շահեկանութենէ:

Տարակույս չկա, թէ Ծնորհալիի և նմանե-րու մեկնությունները, գերազանցապէս ջա-տագովական լինելով, անխուսափելիորեն լեցուն են հոշոտություններ, գուցէ անհարիր ընդլայնումներով և քարոզական անպայ-ման մտահոգությամբ:

Ասոնք ամենքը բնական են հին ժամա-նակներուն համար: Գիրքերը շատ քիչ էին: Ընթերցողները սակալ, իսկ եկեղեցիները՝ լեփ-լեցուն կլինէին կենաց բանին ծարալի բազմությամբ:

Ուստի, սուրբ հայրերը, ինչ որ կգրէին Ա-վետարանին կապակցությամբ, կգրէին միև-

¹⁶ Ներսէս Ծնորհալի, անդ, էջ 23—25:

նույն անպայման քարոզելու առաջադրությամբ եկեղեցվո թեմեն, կամ զանոնք նույնությամբ սորվեցնելու իրենց աշակերտներուն և ժողովուրդին՝ ուր և երբոր հնարավոր լինէր:

Ներկա մեկնիչներուն մոտ թերևս շատ անգամ կ'պակսի հոգեշահության կամ հոգեշինության կայծը, որ խարույկի հանգույն այնքան կ'բոցանա տեր Ոսկեբերանի և Շնորհալիի տիպով մեկնիչներու սիրտերն ու գրիչները:

Մոռնալու չէ նաև նորերեն ոմանց զարտուղումը...: Անոնք երբեմն նոր բան մը ըսելու մարմաջով շուտ կու գան անհարիր զրույցներու, դիցաբանության, կենսաբանության, բանասիրության և այլ բալիղներու մեջ, իբր թե անոնց տվյալներով կարենալ բացատրելու համար հայտնյալ կրոնքին անմեկնելի խորհուրդները:

Իսկ հիներու մոտ նման արտաքին ակնարկներ եթե պատահին անգամ, անոնք կը ծառայեն սխալ և թուր ուսուցումները հերքելու, մոլորութենէ զգուշացնելու և մանավանդ կենաց բանին և աստվածային ճշմարտության պատրքն ունեցող հոգիները հակադրության դարձվածքներով զորացնելու:

Եթե կան վարդապետներ, ինչպես «Եղծ աղանդոց» գիրքին հեղինակը, որոնք բարեպաշտության ծիրին մեջ արտաքին գիտության անտղիակի նպաստներուն ոլորտին մեջ ալ ոտք կ'կոխեն համարձակ, անոնք զայդ կրնան, որպեսզի սուրբ գրական վկայություններուն հետ անոնց իսկ ընձեռած փաստերովը պատահանեցնեն անդրոնք բերանները և կարկեն զակառած լեզուները:

Հավանական է, որ Շնորհալին հունարեն և լատիներեն լավ չգիտնար, բայց աղ ըսել չէ, որ ինքն անտեղյակ էր **Ավետարան** բառին ստուգաբանությանը, զոր չի տար, անշուշտ որ նա գիտեր ավետարանիչներու և

անոնց խորհրդապատկերներուն վերաբերող այլ ծանոթություններ, բայց զանոնք զանց կընէ հիշել չլիիպեցնելու համար ունկնդիրներուն ուշադրությունը: Ուսուցիչն ալեկի քարոզիչ է նա: Ուստի արտաքին բաներու քովն կանցնի հեզիկ մը սահելով: Այս զգուշության հակառակ, սակայն, ստեպ կը փորձվի սուրբգրական բունագրոսիկ վկայություններուն փաստարկությամբ... որ իր մեղքը չէ միայն, եթե մեղք համարելու է աստվածաշնչական գիտելիքներու թվումը՝ սուրբ Գիրքը սորվեցնելու դիտումով...

Այսպես են չորս Ավետարաններուն ծագումին ժամանակագրության, կարգին, չորս հատ լինելուն իր պահպանողական մոտեցումները՝ համաձայն հեղինակին ապրած ժամանակին տվյալներուն և լույսին:

Հայտնի է, որ սուրբ Ներսես Կլայեցիին ծնած և սնած է գերազանցապես կրոնաշունչ միջավայրի մը մեջ:

Ասոր հետ նա դաստիարակությամբ ալ գիտակ է իր ի ծնե և ի պաշտոնե հոգևորական լինելուն, կենաց բանը քարոզելուն և ուսուցանելուն, ժողովուրդին հայր և եկեղեցվո վարդապետ լինելուն կոչումին:

Հեղինակին ինքնության այս գիծերը շուտ փելի են թե՛ իր կատարած Ավետարանի և թե՛ Ընդհանրական թուղթերուն մեկնություններուն մեջ:

Էն տիրակալը Ավետարանի մեկնության մեջ քարոզչության գիծն է: Ասոր համար ալ սուրբ Ներսեսի արծաթ գրիչով տողված այդ մեկնության այսօրվան ընթերցողն իսկ ստեպ դեմ հանդիման կու գա հայոց Շնորհալի Հայրապետին, որ եկեղեցվո սրբազան բեմին վրա, խաչն ու գավազանը ձեռին կանգնած, կքարոզե՝ լի քրիստոնեական հավատքով և սիրո կրակով, նման այն ամեն ողորտիստ եպիսկոպոսներուն, «որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ի մեզ գրանն ճշմարտութեան»:

Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿԵ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ

Կաթողիկե թուղթերը

Նոր Կտակարանի մեջ սուրբ Պողոսի ԺԻ թուղթերուն պես առանձինն փունջ մը կը կազմեն Կաթողիկե կամ Ընդհանրական կոչվող յոթ թուղթերը՝ գրված Հակոբոս, Պետրոս (Ա և Բ), Հովհաննես (Ա, Բ, Գ) և Հուդա առաքյալներուն կողմէ:

Այս յոթ թուղթերու մասին հիմեն ի վեր բոլոր վեճեր եղած են, հակառակ անոնց վրա տարածվող Կաթողիկե մակդիրին, և Եվսեբիոսի օրով անոնց բազում եկեղեցիներու մեջ հրապարակով կարդացվելուն, քանի որ Կեսարացի պատմիչն առաջ եղող


սուրբ հայրերը հարազատ կընդունեին միայն երկուքը՝ Ս. Պետրոսն ու Ս. Հովհաննեսը, իսկ ոմանք կերկմտեին մնացյալ հինգին՝ Հակոբուն, Բ Պետրոսին, Բ և Գ Հովհաննու մասին:

Կաթողիկե կոչումը, զոր առաջին անգամ կհիշէ Եվսեբիոս շուրջ 810-ին¹, այս պարագային ոմանք կվերագրեն վերոհիշյալ յոթ թուղթերը սուրբ Պողոսի առաքելական

¹ Եւսեբիոս, Պատմ. եկեղեցւոյ, Գալ. Գ, գլ. Գ, էջ 146—148:

² Անդ, էջ 132:

թողությունն զանազանելու կարիքին, և անոնց, քանցի Բ և Գ Հովհաննոս թողությունն, տեղական որոշ եկեղեցիի մը կամ անձի մը ուղղված չլինելուն, ինչպես որ են Պողոսի թողությոնը: Ուրիշներ կհիշեն նաև պատճառը զանոնք նախնի եկեղեցվո մեջ լայն տարածում գտած Կղեմեսի և Բառնաբասի ընդարձակ թողությունն և Հերմասի Հովիվեն տարբերելուն, և կամ ալ զանոնք զատորոշելու համար առաքելական պիտակը կրող այն բոլոր անվավեր գրվածքներեն, որ չեն



Ձուագրի խորանագարդ.

արդարացներ իրենց վրա փակցված այդ մակդիրը³:

Կաթողիկե թողությունն առհասարակ ուղղված են խումբ մը եկեղեցիներու և կամ ընդհանրապես քրիստոնյա հավատացյալներու:

Անոնք հետաքրքրական են և շահեկան մասնավորաբար, վասնզի կշռափեն եկեղեցվո նախնական մեկ շրջանին (64—150) կյանքն ու մտածումը: Բայց աստի, անոնք աստվածաբանութենե ավելի հոգևոր ու բա-

րոյական պարզ ուսուցումներ են, վարդապետական բացատրություններ, քրիստոնեական մտածումի և կենցաղի, դաստիարակչական հորդորականներ, ուր հրեական և հեթանոսական բարքերէ զգուշացումի ազդարարություններն վեր գերազանցորեն կտիրապետեն Աստուծո սիրույն ճշմարիտ եղբայրսիրության մեջ երևալու նման գլուխգործոց էջեր, որ ներշնչումի աղբյուր են դարձած ս. Ներսես Շնորհալիին և Երզնկացի Հովհաննես Պլուզին, որուն Սիրո. Խրատը՝ Ունալվայի կարգին մեջ ներմուծված գեղեցիկ ընդլայնումը և հաստատումն իսկ է գայն կանխող Ա. Հովհ. Դ 7—20 հատվածին:

Նախընթաց ծանոթությունը, միացած ժամանակին զգացված պահանջին, հասկանալի կընծայեն Կաթողիկե թողություն մասին ԺԲ դարուն միևնույն շրջանին մեր մեջ ստեղծված հետաքրքրությունը, քանի որ Սև լեռանց վարդապետանոցին դասակիցներեն երկուքը՝ Սարգիս և Ներսես, իրարմե անկախաբար մեյ-մեկ մեկնություն կգրեն Ընդհանրական յոթը թողություն:

ՄԵԿԵՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ԹՎԱԿԱՆԸ

Ընդհանրական թողություն Սարգիսի մեկնության հեղինակին մասին ոչ մեկ տարակույս չէ եղած: Բայց Շնորհալիի հեղինակության դեմ անտեղի կասկածողներ գտնված են:

Ըստ հ. Ղ. Ալիշանի քննության՝ Ներսեսի Կաթողիկե թողություն մեկնության 1198-ի մեկ ձեռագիրին հիշատակարանեն ջնջված է հեղինակին անունը: Այս, գուցե նաև Շնորհալիի Կաթողիկե թողություն և նույնին Մատթեոսի Ավետարանի մեկնություններուն միջև տեսնվող հորինվածքի և ոճի ակնբախ տարբերությունները, ոմանց կասկածել տրված են հեղինակին իսկությունը: Բայց Ալիշանի տեսած մեկ ուրիշ ձեռագիրը բնավ տեղի չի թողուր ադոր, քանի որ ան որոշապես կհաստատե, թե հեղինակն էր «Հայրապետական արժանացեալ շնորհի եւ վարդապետական աստիճանի, Տէր Ներսէս, մականունաւնէալն Կյայեցի, հմտասիրացն հետեւելով պարուց»⁴:

Ասոր վրա Ալիշան իրավամբ կավելցնէ երկու պարագաւ ևս: Այդ միևնույն ձեռագիրին մեջ Ներսեսի մեկնության կհետևի «Շնորհալոյ գրած կամ սրբագրած ս. Սարգըսի վկայաբանութիւնն, եւ գրոց նախա-

³ A. J. Grieve, "The Catholic Epistles", Peake's Commentary On The Bible. Nelson et Sons, London, pp. 901—902.

⁴ Ալիշան Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայք իւր: 1878, Վննտիկ, էջ 115:

գաղափարն՝ Շնորհալույ եղբորորդույ Գրիգոր Ապիրատին ըլլալն»⁵:

Ներսես Կլայեցիի Կաթողիկե թուղթերու մեկնության երբ գրված լինելու մասին որոշ տվյալ մը չկա: Կթվի, թե ան, որպես խնամված հավաքածու մը սուրբ հայրերու մեկնողական մտածումներուն, գրված լինելու է Ներսեսի հայրապետական գահը բազմելէն՝ 1166-էն առաջ, գուցե ավելի վաղ հասակի մէջ, իբրև ուսուցչական ձեռնարկ, որ կրնա օգտակար լինել նաև քարոզչներուն և ընթերցող հասարակության:

Կացությունը. — Շնորհալիի Կաթողիկե թուղթերուն մեկնությունը տակավին չէ տպագրված: Մենք նոր բախտն ունեցանք տեսնելու անոր մեկ օրինակը շնորհիվ Վեներտիկի Մխիթարյան ուխտին ընծայած դյուրություններուն:

Ս. Ղազարու թիվ 101 ձեռագիրը, միջին ծավալ, երկայուն, նոսրգիր, լուսանցազարդ և կաշեկազմ, ընդօրինակված Կ. Պոլիս, 1720-ին, կաարունակէ և՛ Սարգիսի, և՛ Ներսեսի համանուն մեկնությունները: Շնորհալիին Սարգիսինէն ետքը՝ «Հաւաքումն Մեկնութեան Եօթանցուն Թողոցն Կաթողիկէից» վերտառությամբ⁶:

⁵ Անդ, էջ 116:

⁶ Սարգիսի Կաթողիկայց մեկնությունն ունի երկու տարբեր խմբագրություններ տասնյակ մը տարիներու հետափորությամբ, երկուքն ալ կատարված նույն ինքն հեղինակին ձեռքով: Ընդարձակը լրացված է 1156-ին, իսկ համատուրը՝ 1166-ին:

Սարգիսի մեկնությունը հրատարակված է Կ. Պոլիս և «Մեծ արժեք ունի թե՛ մեկնողական ոճին և թե՛ հորդորականներուն քարոզական ձիրքին և թե՛ ընտիր հայկաբանության համար» (Մ. Օրմանյան, «Ազգապատում», Ա, համ. 956): Այլշան գայն կհամարի գրված «Երկար քննաբանությամբ և ալ երկար խրատական հորդորակոք, ջանալով Ոսկեբերանի ոճույն հետևել ... շարադրությունն հատակ, և ավելի պարզ ըլլալով, գլուցվածքն ալ կակոյղ և սրտաբուխ անախորժ չլլար կարդալու» («Շնորհալի և պարագայք յոր», էջ 114—115):

Սարգիսի մեկնությունը միաձուլ և միատարր է: Ան թեև մոտեն կհետևի Ոսկեբերանի և այլ սուրբ հայրերու, բայց իր ժամանակին ընդունված դրության համաձայն՝ քացի հառաջաբանն ուրիշ տեղ չի հիշեր մեջերան վկայություններ:

Ըստ Դուրյանի Ոսկեբերանն զատ, ան օտար կամ ազգային որևէ առաջնորդ մը չէ կրցած ունենալ... գլուխ հասնո է իր **Մեկնութիւնը «ոչ դժուարապատում և երազահանական»** բառերու կիրարկումով և ոչ ալ «գեղջուկ բանիք» աղավաղելով իր բնագիրներուն իմաստն ու տեսությունը: Ե. արք. Դուրյան, Պատմ. Հայ Մատենագրության, Երուսաղեմ, 1932, էջ 201—202:

Նկարագիրը. — Ներսես Կլայեցիի այս գործին քաղվածական շարադրանքը, սեղմ ծավալը, մեջբերված վկայություններու հեղինակներուն իրենց անուններով հիշատակությունը, ծաղկաքաղ ընտիր հավաքածուի մը բնույթը կուտան Ընդհանրական թուղթերուն իր մեկնության, որ բոլորովին այլ նկարագիր ունի միևնույն հեղինակին Ավետարանի մեկնությունն և Սարգիս վարդապետի համանուն մեկնության ընդարձակ ու համառոտ կրկնակ խմբագրություններին: Կլայեցին այստեղ շատ մոտ է մեր օրերու մեկնիչներուն, որ կարճ և տեղին նոստերով կգոհանան լուսաբանել ուզված իմաստը և կխորշին խնդրումներն և ճապաղաղումն:

Շնորհալի Կաթողիկե թուղթերուն մեկնության առթիվ պետք չի տեսներ ընդհանուր ներածություն մը գրելու, բայց յոթ նամակներն յուրաքանչյուրին սկիզբը կգետնէ կարճ, գրեթե մեկական սյունակ **նախադրություն** (հառաջաբան) մը՝ նշելով մեն մի նամակի հեղինակին ինքնությունը, թուղթին որոնց և ինչու գրված լինելը, ընդհանուր բնույթը և բովանդակությունը: Ներսես անցնելով բուն նյութին առանձին կնշանակէ մեկնելի բնագիրին համարը նույնությամբ, կամ հատված մը՝ իմաստին համաձայն: Ապա մեկ-երկու կարճ պարբերությամբ կուտա անոր մեկնությունը, յուրաքանչյուր մեջբերումին գլուխը նշանակելով մեջբերված վկայության վկայություններուն հեղինակներուն անունները, որոնք են՝ Ոսկեբերան, Սեվեոիոս Անտիոքացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Բարսեղ Կեսարացի, Սեդրիանոս, Թեոդորոս կրոնավոր, Թերվոդորիտոն, Հյուսիքոս, Դիդիմոս, Եփրեմ, Տիմոթեոս, Մաքսիմոս և այլն:

Նկատելի է, որ մինչ Սարգիսի համանուն մեկնության համառոտ խմբագրությունը Վեներտիկի վերոհիշյալ ձեռագիրին 471 երեսները կրնն, Ներսեսին 164 էջ է միայն, որմէ ամենն երկայնը՝ Ս. Հովհաննու 77, իսկ ամենն կարճը՝ Բ. Հովհաննուն 8 երես:

Ս. Ներսեսի Կաթողիկե թուղթերուն մեկնության վրա գաղափար մը կազմելու համար այստեղ թարգմանաբար կուտանք հատված մը՝ իբր նմուշ ամբողջության:

ՀԱՏՎԱԾ ՄԸ

ՇՆՈՐՀԱԼՈՒ ԿԱԹՈՂԻԿԵ ԹՈՒՂԹԵՐՈՒ
ՄԵԿՆՈՒԹԵՆԵՆ

Բնագիրը. — «Հակոբոս, Աստուծո և Տեր Հիսուսի Քրիստոսի ծառա, սպիտոքի տասներկու ցեղերուդ՝ ողջուն:

Մեկնությունը. — Առաքյալներեն յուրաքանչյուրը սովորություն ունի իր գրություններու գլուխներուն գլուխը դնելու իր անունը,

իբրև պատիվ Քրիստոսի ծառայության լուծին: Վասնզի Հիսուսի Քրիստոսի ծառա անվանվելու պատիվին նմանը չկա: Տասներկու ցեղերուդ կըսէ, որովհետև ինքը թլիսատության առաքյալ լինելով կըգրե անոնց, որ հրեաներու անհավատության զգվանքեն՝ տիոված էին հեթանոսներու մեջ: Նախ զանոնք կողջունէ որպէս խաղաղության ավետարանիչ:

ԴԻԴԻՄՈՍԻ

«Ինչպէս աշխարհական մարդերը աշխարհական գիրերու՝ այսինքն նամակներու և մուրհակներու գլուխներուն վրա կնշանակեն այն պատիվը, որով կճանչցվին, որպէսզի ադով լսողներուն հնազանդություն ընդունին, ազնպէս ալ առաքյալները կմակագրեն իրենց Հիսուսի Քրիստոսի ծառա լինելը»:

⁷ Զեռագիր № 101, էջ 487, ս. Ղազար, Վեմնոյիկ:

